

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/8

13 հունվարի 2017թ.

Քննարկվեց Ա/Ձ Մարգարիտ Առաքելյանի դիմումը սխալմամբ ՀԴՄ մուտքագրված գումարն իրացման շրջանառությունից նվազեցնելու վերաբերյալ:

Ա/Ձ Մարգարիտ Առաքելյանի դիմումում բերված փաստարկները.

Ա/Ձ Մարգարիտ Առաքելյանը հայտնում է, որ 05.11.2016թ. անզգուշաբար խփվել է 10.012.500 դրամ ՀԴՄ կտրոն և խնդրում է այն համարել անվավեր:

Ա/Ձ Մարգարիտ Առաքելյանը հայտնում է նաև, որ 2013թ. 2-րդ եռամսյակից զբաղվում է խմորեղենի և զովացուցիչ ջրերի արտադրությամբ և վաճառքով ք.Գյումրի, Պ.Սևակի 13/4 հասցեում, որտեղ և տեղադրված է ՀԴՄ-ն: Առևտրային տարածքի մակերեսը կազմում է 20 քմ, որտեղ վաճառվում է միայն սեփական արտադրանքը:

Ա/Ձ Մարգարիտ Առաքելյանի իրացման շրջանառությունը կազմել է 2015թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում, համապատասխանաբար՝ 1.330.510 դրամ, 1.987.280 դրամ, 3.681.880 դրամ, 3.579.020 դրամ: 2016թ. 1-ին, 2-րդ, 3-րդ եռամսյակներում, համապատասխանաբար՝ 1.638.010 դրամ, 1.307.700 դրամ, 2.606.340 դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Մարգարիտ Առաքելյանը խնդրում է 05.11.2016թ. անզգուշաբար ՀԴՄ մուտքագրված 10.012.500 դրամ գումարը համարել անվավեր և չընդգրկել իրացման շրջանառության կազմում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Մարգարիտ Առաքելյանը 05.11.2016թ. սխալմամբ հսկիչ-դրամարկղային մեքենա է մուտքագրել 10.012.500 դրամ, ինչի մասին տեղեկացել է օրվա վերջում՝ օրվա հերթափոխային հաշվետվությունը հանելու ժամանակ: Սակայն, քանի որ չի պահպանվել նշված գումարի կտրոնը, ուստի Ա/Ձ Մարգարիտ Առաքելյանը չի կարողացել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգով և ժամկետում լուծել առաջացած խնդիրը: Մասնավորապես, ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 19-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն. «Դրամական հաշվարկների կատարման ընթացքում սխալմամբ մուտքագրված գումարների գրանցման դեպքում, եթե սխալը հայտնաբերվել է գնման կտրոնի փակումից հետո մինչև օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումը, ապա սխալ գրանցումից անմիջապես հետո սխալ գումարով տպված կտրոնի հիման վրա լրացվում է գումարների՝ սխալմամբ գրանցման ակտը՝ համաձայն N 6 ձևի, և

ՀԴՄ-ի միջոցով կատարվում է վերադարձ՝ տպվելով վերադարձի կտրոն: Այն դեպքում, երբ սխալը հայտնաբերվել է օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո, լրացվում է սխալմամբ գրանցված գումարների ակտը. տվյալ դեպքում վերադարձի կտրոն չի տպվում.

...

7) կազմակերպությունները, յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ՝ յուրաքանչյուր ՀԴՄ-ի համար իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների՝ սխալմամբ գրանցման մասին տեղեկանք՝ համաձայն N 7 ձևի.»:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Մարգարիտ Առաքելյանը չի կարողացել օգտվել ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններով նախատեսված ընթացակարգի դրույթներից, քանի որ չի պահպանվել վերոգրյալ գումարի չափով կտրոնը:

Միննույն ժամանակ, Ա/Ձ Մարգարիտ Առաքելյանի կողմից 10.012.500 դրամ գումարը սխալմամբ մուտքագրված լինելու մասին է վկայում 2015թ. և 2016թ. ընթացքում (եռամսյակային կտրվածքով) գոյացած իրացման շրջանառության ծավալները:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Ա/Ձ Մարգարիտ Առաքելյանի կողմից 10.012.500 դրամը ՀԴՄ է մուտքագրվել թյուրիմացաբար, այն մեխանիկական սխալի արդյունք է, հետևապես սխալմամբ մուտքագրված գումարը, ըստ էության, չի կարող հիմք հանդիսանալ վերոգրյալ գումարը Ա/Ձ Մարգարիտ Առաքելյանի իրացումից հասույթի ընդհանուր գումարի մեջ ներառելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ա/Ձ Մարգարիտ Առաքելյանի դիմումը՝ սխալմամբ ՀԴՄ մուտքագրված գումարն իրացման շրջանառությունից նվազեցնելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ